ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 24 նոյեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Վ. Հովհաննիսյան

Քննության առնելով ՀՀ քաղաքացիներ Միքայել Դանիելյանի՝ 2009թ. նոյեմբերի 11-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը քննության ընդունելու հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Քաղաքացի Մ. Դանիելյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:
2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 17.11.2009թ: Վերջնական դատական ակտը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի վճռաբեկ բողոքները վերադարձնելու մասին որոշումը, կայացվել է 2009թ. հոկտեմբերի 8-ին:Առկա է պետական տուրքից ազատելու վերաբերյալ միջնորդություն:
3. Քանի, որ՝
    - դիմումում առաջադրված հարցերը ենթակա են ՀՀ սահմանադրական դատարանին,

- դիմողներն իրավասու են դիմել ՀՀ սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ ՀՀ սահմանադրական դատարանի որոշում,
- Դիմումի առարկայի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- Դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասով, 39 հոդվածով, 69-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 6-րդ մասերով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի «գ» կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի առաջին դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ Մ. Դանիելյանի դիմումն ընդունել քննության կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:
2. Բավարարել պետական տուրքից ազատելու վերաբերյալ դիմողի միջնորդությունը:
3. Նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանի վարույթում կա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ 17.11.2009 թվականի ՍԴԱՈ-101 աշխատակարգային որոշմամբ միավորված գործ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի համաձայն՝ առաջարկվում է սույն գործը միավորել այդ գործին և քննել դրանք մեկ վարույթում:

Նախագահող՝

Անդամներ՝